ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N°—Ե -03/172

«06» 08. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 46-Ա ,թիվ 47-Ա և թիվ 48-Ա որոշումները:

Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01,Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 31» հուլիսի 2018 թվականի N46-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-087-0063-0026 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին՛՛ ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ,ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի ,, Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին՛՛ 01.06.2010թ., թիվ 186-Ն հրամանով , ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը

Որոշում եմ

1.Օրենքի ուժով 06-087-0063-0026 ծածկագրի տակ գտնվող 0,15366 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Լյուսյա Արտավազդի Թեմուրյանի/ծնված 1930թ./ սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում , չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել 0,15366հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1990 թվականին կառուցված 18,67 քմ անասնագոմի նկատմամբ Լյուսյա Արտավազդի Թեմուրյանի /ծնված1930թ./ սեփականության իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Հողամասի վրա առկա են 174,05քմ մակերեսով ինքնակամ կառույցներ:

6.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝Շիրակամուտ համայնք 24-րդ փողոց ,9 հողամաս և անասնագոմ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01,Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 31» հուլիսի 2018 թվականի N47-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-087-0170-0035 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը

Որոշում եմ

1.Օրենքի ուժով 06-087-0170-0035 ծածկագրի տակ գտնվող 0,1154 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Լյուսյա Արտավազդի Թեմուրյանի/ծնված 1930թ./ սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում , չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե գ.Շիրակամուտ

Հեռախոս 0255-6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01-ը օգոստոսի 2018 թվականի N48-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին՞՞ ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին՞՞ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ,և հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի 13.11.2017թ. ,, «Շիրակամուտ համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնման մասին» թիվ 46-Ա որոշումը,

Որոշում եմ

1.՝Հաստատել Շիրակամուտ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը

Երանոսյան Աշոտ – համայնքի ղեկավար
Խաչատրյան Անուշ - մարզպետարանի ներկայացուցիչ
Թամարյան Դավիթ - մարզպետարանի ներկայացուցիչ
Բաղդասարյան Վարդան – մարզպետարանի ներկայացուցիչ
Նալբանդյան Հրաչ - համայնքի ավագանու անդամ
Իգիթխանյան Զավեն -համայնքի ավագանու անդամ
Նասլյան Ներսես -համայնքի ավագանու անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ղեկավարի 10-ը փետրվարի 2017թ.,,Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին՞՞ թիվ 4-Ա որոշումը:

3.Սույն որոշումն՝ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան